# Արձանագրություն N 4

## «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «__17__ » «դեկտեմբերի» 2018թ.

ժամը՝ 14.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

### 1. «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 22-րդ կետի դրույթներից ելնելով՝ հանձնաժողովը **«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման նիստին արձանագրեց հետևյալ անհամապատասխանությունները.

- «Նաիրի Ալանիկա» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող՝ 13000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է թույլատրելի առավելագույն շեմը՝ 9-րդ չափաբաժնի մասով՝ 12,920 ՀՀ դրամ: Ինչպես նաև, վերը նշված չափաբաժինի մասով կցված չէ ապրանքի ամբողջական նկարագիր հանդիսացող Հավելված 3-ը, իսկ ներկայացված դիմումի /Հավելված 2/ մեջ առկա են կետեր, որոնք տվյալ ընթացակարգի շրջանակներում չեն:
- «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ 1-ին չափաբաժնի մասով հստակ նշված չէ նյութի տեսակը, որից պատրաստված է ապրանքը, 33-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում առկա չէ ասպիրացիոն կաթետրի չափը: Չափաբաժիններում հստակ նշված չէ ապրանքային նշանը:
- «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիմումի /Հավելված 2/ մեջ առկա են կետեր, որոնք տվյալ ընթացակարգի շրջանակներում չեն, ինչպես նաև 27-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը պետք համապատասխան լինի պարզաբանմամբ տրված տեխնիկական բնութագրին:
- «Կուրացիո» ՍՊ ընկերության կողմից տրված 17, 18, 19-րդ չափաբաժիններում, տեխնիկական բնութագրում նշված չէ ապրանքի նոր/չոգտագործված լինելը/, ինչը սահմանված է հրավերով:
- «Մարգ Ֆարմացիա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ ապրանքի խտությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

### 2. « ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում մասնակիցների որոկավորման փաստաթղթերի շտկման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցել վերոհիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները,

գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Հակոբյան

Անդամներ՝ _____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան